



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 34-Ա2

«07» 06 2019

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0715.15.5 «ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0715.15.01.5 «ՏԵԽՆԻԿ՝ ՍԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ԵՎ ԱՅՆ
2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆԻՑ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԵՐԴՐՎՈՂ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թ. մարտի 22-ի N 333-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 19-րդ կետը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1320-Ա/Ք հրամանը և ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն» հիմնարկի կողմից ներկայացված ռլորտային հանձնաժողովի փորձագիտական դրական եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել.

1) Միջին մասնագիտական կրթության 0715.15.5 «Սառնարանային տնտեսություն» մասնագիտության 0715.15.01.5 «Տեխնիկ՝ սառնարանային տնտեսության» որակավորման պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:

2) Միջին մասնագիտական կրթության 0715.15.5 «Սառնարանային տնտեսություն» մասնագիտության 0715.15.01.5 «Տեխնիկ՝ սառնարանային տնտեսության» որակավորման պետական կրթական չափորոշիչը 2019/2020 ուսումնական տարվանից փորձարկման նպատակով ներդրվող միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների ցանկը՝ համաձայն հավելված 1-ի:


2. Ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ պետական կրթական չափորոշիչի փորձարկման ընթացքի վերաբերյալ, վեցամսյա պարբերականությամբ, գրավոր

հաշվետվություն ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարություն և ՄԿՈՒԶԱԿ, իսկ փորձարկումն ավարտվելուց հետո ամփոփ հաշվետվություն՝ անհրաժեշտ գնահատումներով և առաջարկություններով:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արտակ Աղբալյանին:

Նախարար

Արայիկ Հարությունյան

 Invalid signature

X 

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378